ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

20 հունիսի 2012թ. գ.Փոքր Սեպասար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա.ԳԻԶԻՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գիզիրյան

Ձեզ է ներկայացվում Փոքր Սեպասարի համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 18-ի թիվ 13-Ն որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքներով

Փոքր Սեպասարի համայնքի ղեկավար՝ ***Ջ.Բդոյան***

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մտից թիվ 3697
20. 06 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ

ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2012 թվականի հունիսի 18-ի թիվ 13- Ն

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ԷԼԵԿՏՐՈՆ ՀԵԿ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏՆԵՐԻՑ՝ 0.14ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> որոշման կարգի 17-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 25-ի թիվ 6 դրական եզրակացությունը

Համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասարի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման՝ համաձայն հավելվածի, ըստ որի համայնքի վարչական սահմաններում գտնվող իրավաբանական անձ՝ <<Էլեկտրոն ՀԷԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 1.0 հեկտար /0.5 հեկտար և 0.5 հեկտար/ գյուղատնտեսական նշանակության արոտներից 0.14հեկտարը /0.08 հեկտար և 0.06 հեկտար/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոքր հիդրոէլեկտրակայանների գլխամասային հանգույցների և օժանդակ կառույցներների շինարարության համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասարի գյուղական համայնքի ղեկավարին՝

1) ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան՝ մինչև փոփոխումը.

2) սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերը 3 տարվա ընթացքում չկառուցապատվելու դեպքում սահմանված կարգով ներկայացնել սույն որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Սեպասարի գյուղական համայնքի ավագանու որոշման նախագիծ:

Ավագանու անդամներ՝

Ս. Բաղդասարյան /կողմ/

Լ.Գրիգորյան /կողմ/

Մ. Մելիքյան /կողմ/

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ԲԴՈՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱ

Հավելված

ՀՀ Շիրակի մարզի Փոքր Սեպասարի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 18-ի թիվ 13-Ն



1

Կետի հ/հ	X	Y	Հեռավոր-ությունը (մետր)
1	8399071.8033	4546387.7265	40
2	8399058.0176	4546425.2759	20
3	8399076.7922	4546432.1688	40
4	8399090.5780	4546394.6194	20
1	8399071.8033	4546387.7265	

2

Կետի հ/հ	X	Y	Հեռավոր ությունը (մետր)
1	8400564.7736	4545035.0391	20
2	8400579.5173	4545048.5529	30
3	8400599.7880	4545026.4374	20
4	8400585.0443	4545012.9235	30
1	8400564.7736	4545035.0391	

* Ծանոթագրություն

Ա -- էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր-- **0.14հա**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ԲԴՈՅԱՆ